

Ցիշեալ՝ ինչպէս և նախընթաց տարիների, աւարտական շարադրութիւններից մի քանիսը, լինելով բարեխիղջ աշխատութեան արդիւնք և ունենալով շատ հետաքրքրական նիւթ, արժանի են տպագրութեան. ցանկալի էր որ այդպիսիները տարեցտարի լոյս տեսնեին և «Ճեմարանական Հրատարակութիւններ»ի մի շարք կազմուեր նոցանից; Ցանկալի էր մանաւանդ, որ զոցա տպագրութեան ծախքը Ա. Ա. Թոռի տպարանի վերայ չծանրանար, այլ մի բարերար գտնուեր և մի որոշ գումար յատկացներ այս գործի ապահովութեան համար:

«Ա. Բարատառի ներկայ համարում յառաջ ենք բերում մի մի նմուշ Խոստիկեանի, Մելիք Յարութիւննեանի և Գիւլիսանդաննեանի շարադրութիւններից:

Բարձր. Տ. Կարապետ վարդապետի հրաժարելով, Հոգեոր Ճեմարանի տեսուչ նշանակուեց Ա. Ե. Պ. Կարապետ Կոստանեանց, որ մի քանի օրով Մայր Ա. Թոռս եկաւ և ստանձնեց իրեն առաջարկուած պաշտօնը՝ ներկայացնելով Նորին Վեհափառութեան ի հաստատութիւն առաջիկայ տարուայ համար իւր կազմած ուսուցչական խմբի և դասերի ցուցակը: Տ. Կարապետ վարդապետ կմնայ տեսչութեան պաշտօնում մինչեւ օգոստոսի վերջը:

Նորին Վեհափառութիւն բացարձակ հրամանաւ առաջիկայ Ուսումն, տարուայ համար Ճեմարանում ոչ մի զիշերօթիկ ձրիավարժ աշակերտ չպէաք է ընդունուի: Ճեմարանի սաների թիւն այնչափ շատ էր վերջին տարին, որ ուսումնաւարտներին և զանազան պատճառներով հեռացրածներին հանելուց յետոյ դարձեալ 200-ի չափ կմնան. և արդէն քանի անգամ կրկնուած ու բացարուած է, որ ներկայ պայմաններում աւելի թուով որդեղիրներ պահեյու հարաւորութիւն չկայ:



Նորին Վեհափառութիւնն, աղատ կացուցանելով մեզ Ճեմարանի տեսչութեան պաշտօնից՝ բարեհաճեց սպատուիրել,

որ ձեռնարկենք անմիջապէս համեմատելու Մայր Աթոռի մատենագարանում՝ գտնուած ձեռագիր աստուածաշունչները և տմենընտիր օրինակները որոշելով՝ բնագիր պատրաստելու աստուածաշունչի նոր տպագրութեան համար։ Այս բարդ գործին կարելի լինի միայն սեպտեմբեր ամսին վերջնական կաղմակերպութիւն տալ, և մենք այն ժամանակ առիթ կունենանք երեխ պարզելու, թէ ինչպէս ենք հասկանում գործը և ինչպէս ենք ձեռնամուխ եղել նորան. շտապում ենք այժմ եղած երկմատութիւնները վերացնել՝ հաղորդելով, որ արդէն ձեմարանի ուսումնաւարտ և ուսանող սաների օգնութեամբ՝ հարկաւոր բաղդատութիւններն արել ենք և ընտրել այն ձեռագիրները, որոնք բնագրի վերականգման համար նշանակութիւն կարող են ունենալ և որոնց բաղդատութեամբ կատացուին գրեթէ բոլոր միւսների տարուրեր ընթերցուածներն են. յոյս ունինք այնչափ յառաջ տառել մեր աշխատութիւնները, որ կարելի լինի սեպտեմբերին անխափան սկսել տպագրութիւնը։ Բաւական է յիշել, որ Մ. Աթոռի մատենագարանում՝ թերիները չհաշուած, քառասունի չափ լրիւ ձեռագիր աստուածաշունչներ կան (երկուս ևս 8. Խաչիկ վարդապետի ժողովածուի մէջ), որոնցից իննը աւելի հին են քան մինչեւ այժմ լաւագոյն համարուած Զոհրաբեան օրինակը*, — որպէս զի պարզ լինի, թէ ինչ կարելի է սպասել նոցա համեմատութիւնից։ Աակայն մենք կկամլնայինք մի գաղափար ունենալ նաև, եթէ կարելի լինի, Աստուածաշունչի զուրսը պահուած բոլոր ձեռագիրների մասին և ի հարկին ըստ չափու հնարաւորութեան օգտուել նոցանից։ Դժբաղգարար մեր հնագոյն օրինակներն ես 1255 և 1272 թ. մերից են միայն. մինչդեռ եթէ գտնուելը մի օրինակնախուրինեան շրջանից՝ Հին Կտակարանի մի երկաթագիր օրինակ (ինչպիսին մեր լսելով կայ օր. Կարինում), պէտք է

* Վ. Ենետիկի հնագոյն ձեռագիրը (գրուած 1319 թ. ին), որ հիմք է եղել Զոհրաբեան հրատարակութեան համար՝ արտագրուած է հաւականաբար մեր մատենագարանի հ. 159 ձեռագրից (գր. 1303 թ.), կամ մի ընդհանուր նախատիպից, որ երկրորդական տեղ է բռնում մեր ձեռագիրների մէջ։

կարծել, որ խիստ զգալի տարբերութիւններ կունենար միւսներից և շատ թանկագին հնութիւններ երեան կհաներ: Կարող են լինել հարկաւ նաև այնպիսի նոր օրինակներ, որոնք անմիջական կազ կունենան այդպիսի հների հետ և նոյն ծառայութիւնը կը մատուցանեն: Ուստի խնդրում ենք բոլոր այն անձանց, որոնք մի ձեռագիր աստուածաշունչի տեղ գիտեն՝ ըստ կարելոյն մանրամասն տեղեկութիւններ հաղորդել մեզ նորա մասին, եթէ հնարաւոր է՝ նկարագրելով և տալով նորա բովանդակութիւնն այնպէս, ինչպէս է օր. Վիեննայի Միհթարեանց ձեռագիրների ցուցակի մէջ, և Հին Կոտակարտնի իւրաքանչիւր գրքի սկզբից և վերջից մի քանի տող, կամ Ծննդոց գրքի սկզբից մի քանի դլուխ արտադրելով և մեզ ուղարկելով: Մենք կկարողանանք այդ գեղագում ստուգել, թէ որ ձեռագիրներն իրենց զուգակիցնը ունին մեր մատենադարանում, և եթէ գտնուի գոնե մի ներկայացուցիչ տարբեր աւանդութեան՝ այդ ևս մեծ արժեք կունենայ:

Համեմատելով լրիւ օրինակների հետ Աստուածաշունչի այն գրքերը, որոնք պահուած են կողմնակի ձեռագիրներում, մենք գանում ենք երբեմն այնպիսի արաւաքոյ կարգի ընթերցուածներ, որոնք համոզում են, թէ սովորական ձեռագիրները մի ընդհանուր բովից են ելել և այդաեղ շատ հին ու արժեքաւոր գծեր հարթուել են: Պրոֆ. Մարր իրաւունք ունի ենթագրելու, թէ Աստուածաշունչը ուկեդարեան թարգմանութիւնը անդադար սրբագրուել և յարմարեցուել է Եօթանասնից թարգմանութիւն: Երբ համեմատում ենք մեր ձեռագիրները, մի կողմում երրայտկանը բնագիրը դրած ասորական թարգմանութեան հետ և միւս կողմում Եօթանասնից յունարէն թարգմանութիւնը՝ շարունակ պատահում ենք այնպիսի ընթերցուածների, որոնք աւելի նման են բնագրին քան յունարէնին և որ երբեմն նոր օրինակների մէջ փոխած և յունարէնին են յարմարեցրած: Ահա այդպիսի ընթերցուածներ վերականգնելու կարող են նպաստել կողմնակի աւանդութիւնից յառաջ եկած ձեռագիրները. ուստի մեզ նոցա հետ ծանօթացնողները ա-

ռանձին ծառայութիւն մատուցած կլինին գործին և մեղ շատ պարտաւորեցրած:

Երբեք մի կողմնակի հետեւութիւն մեր արած համեմատութիւններից՝ կարող ենք յայտնել, որ պրոֆ. Գր. Խալաթեանի հրատարակած Մնացորդաց Գրքերի նորութեան թարգմանութիւնը մեր մատենադարանի հ. 176=183 ձեռագրում չէ միայն, ինչպէս հռչակում է նա իւր հրատարակութեան մէջ, առելով, որ Ա. Աթուում զանուած երեսնից աւելի գրչագիրները աչքից անցրել է և ոչ մ.կի մէջ չի գտել: — Ինչպէս յիշեցինք, այսաեղ այդպիսի գրչագիրներ երեսնից շատ աւելի են և Յարգելի Ռւսուցչափետի աչքից փախել են՝ հ. 181 ձեռագիրը, որի մէջ այդ թարգմանութեան մի խոշոր հատուածը կայ (կարկատած միւս թարգմանութեամբ) և հ. 944 Միսիթար Ալյոհիվանեցու ձառնափելը, որ ամբողջ աստուածաշունչի և մի շարք հետաքրքրական տարականոն գրուածների հետ պարունակում է նաև Մնացորդաց գրքերն այդ թարգմանութեամբ, և սոքագերջանում են նոյն կերպ և նոյն յաւելուածով (Սահակ կաթողիկոսի թարգմանութեան մասին), ինչ որ Երուսաղեմեան օրինակը, և գուցէ աւելի անվիմար են մնացել քան նոյն իսկ այդ օրինակը: *

Վեհափառ. Հայրապետի հրամանով ձեմարանի այս տարուայ ուսումնաւարաներից չորս հոգի պէտք է մնան յատկապէս Աստուածաշունչի հրատարակութեան գործում աշխատակցելու համար:

Կ. Վ.



* Ինչպէս լսում ենք Ալյոհիվանեցու ճաւելութի մէջ այդ թարգմանութեան գոյութիւնը նկատած է եղել նաև Արժանապատիւ Մեսրոպ վարդապետը, որ առանձնապէս պարապել է ձեռագիր Աստուածաշունչների ուսումնասիրութեամբ: